ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/31

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչներ՝ Հ. Մարտիրոսյան, Ա. Սողոմոնյան,
«Ինկրիպտ» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյան,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.04.2019թ. թիվ 26/26-1/7038-2019 գրությամբ «Ինկրիպտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ մշակույթի նախարարության 22.04.2019թ. թիվ 02/01.91/2399-19 գրության հիման վրա, 29.04.2019թ. «Ինկրիպտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ մշակույթի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ մշակույթի նախարարությունը 22.04.2019թ. թիվ 02/01.91/2399-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով մեկ չափաբաժնով հայտարարված ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էր ներկայացրել թվով 4 մասնակից, այդ թվում՝ «Ինկրիպտ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 02599576):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. կայացած հայտերի բացման նիստում «Ինկրիպտ» ՍՊԸ-ին գնահատող հանձնաժողովը ճանաչել է ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ կարգ)

43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովի քարտուղարը 11.04.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրվել է հարցման մասին տեղեկատվություն:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Ինկրիպտ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը հրավերով սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28 ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ հանձնաժողովը 2019 թվականի ապրիլի 17-ին՝ ժամը 11:00-ին կայացած նիստում որոշել է «Ինկրիպտ» ՍՊԸ-ի հայտը մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, միաժամանակ, հիմք ընդունելով կարգի 45-րդ կետը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:»:

3. <u>«Ինկրիպտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 30.04.2019թ. գրությամբ դիմել է «Ինկրիպտ» ՍՊԸ-ին ՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.04.2019թ. թիվ 26/26-1/7038-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը 16.05.2019թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

1. «Ինկրիպտ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել ՀՀ մշակույթի նախարարության կողմից հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգին և ճանաչվել 1 տեղ զբաղեցնող մասնակից:

2. «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով 11.04.2019թ. ծանուցել է «Ինկրիպտ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ներկայացնել «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը:

3. Ընկերության կայքի՝ www.incript.am և համապատասխանաբար կայքին կցված a.palikyan@incript.am էլ. փոստի սպասարկող "Գլոբալ ԱՐ" ՍՊԸ-ն իր 08.05.2019թ. տրամադրած գրությամբ հայտնել է, որ 10.04.2019թ.-18.04.2019թ. ընկած ժամանակահատվածում սերվերային համակարգի տեղափոխման և տեխնիկական սպասարկման բարելավման նպատակով հոսթինգ ծառայության մատակարարումը կասեցված է եղել, որի հետևանքով անհնար է եղել մուտք գործել համակարգ, ինչպես նաև օգտվել էլեկտրոնային փոստի ծառայություններից:

4. Էլեկնտրոնային փոստի ծառայությունը խափանված լինելու հետևանքով՝ «Ինկրիպտ» ՍՊԸ-ն չի ստացել «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով ուղարկված 11.04.2019թ. ծանուցումը:

5. «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ «Ինկրիպտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ինչպես արդեն հայտնել էինք, «Ինկրիպտ» ՍՊԸ հայտ է ներկայացրել ՀՀ մշակույթի նախարարության կողմից հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգին և ճանաչվել 1 տեղ զբաղեցնող մասնակից:

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ ծանուցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկելով ներկայացնել «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը: Նշված ծանուցումը ուղարկվել է Մասնակցին 11.04.2019թ.:

Ընկերության կայքի՝ www.incript.am և համապատասխանաբար կայքին կցված a.palikyan@incript.am էլ. փոստի հետ կապված սերվերային համակարգի տեղափոխման և տեխնիկական սպասարկման բարելավման աշխատանքների հետևանքով 10.04.2019թ.-18.04.2019թ. ընկած ժամանակահատվածում նշված էլեկտրոնային փոստը չի աշխատել (հիմք՝ "Գլոբալ ԱՐ" ՍՊԸ-ն իր 08.05.2019թ. գրություն):

Վերոհիշյալի արդյունքում «Ինկրիպտ» ՍՊԸ-ն 11.04.2019թ. ծանուցումը չի ստացել և համապատասխանաբար, երեք աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին համապատասխան փաստաթղթերը:

Վերոհիշյալը իր հերթին հանգեցրել է «Ինկրիպտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի մերժմանը՝ սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընկերության կայքի՝ a.palikyan@incript.am և համապատասխանաբար կայքին կցված a.palikyan@incript.am էլ. փոստի սպասարկող "Գլոբալ ԱՐ" ՍՊԸ-ն իր 08.05.2019թ. տրամադրած գրությամբ հավաստել է, որ 10.04.2019թ.-18.04.2019թ. ընկած ժամանակահատվածում սերվերային համակարգի տեղափոխման և տեխնիկական սպասարկման բարելավման նպատակով հոսթինգ ծառայության մատակարարումը կասեցված է եղել, որի հետևանքով անհնար է եղել մուտք գործել համակարգ, ինչպես նաև օգտվել էլեկտրոնային փոստի ծառայություններից:

Յանկանում ենք փաստել, որ այս պարագայում Ընկերությունը տեխնիկական խնդիրների պատճառով զրկվել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված իր

պարտականությունը իրականացնելուց, ինչը փաստվում է նաև "Գլոբալ ԱՐ" ՍՊԸ-ն իր 08.05.2019թ. տրամադրած գրությամբ, և նման պայմաններում գտնում ենք, որ բացակայում է Մասնակցի մեղքը որակավորման փաստաթղթեր չուղարկելու հարցում՝ նման ծանուցում չստանալու հիմքով:

Հարգելի պարոն Օհանյան, «Ինկրիպտ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը քննելիս՝ խնդրում ենք հաշվի առնել Ընկերության կողմից դրսևորած վարքագիծը և վերջինիս կողմից փաստաթղթերը չներկայացնելու պատճառը:»:

Ելնելով վերոգրյալից, Բողոքներ քննող անձին խնդրել են «Ինկրիպտ» ՍՊԸ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2019/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով մեկ չափաբաժնով հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Ինկրիպտ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով գնանշման հարցման հրավերի առաջարկվող ապրանքի' հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին ներկայացրած հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ «Ինկրիպտ» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/28» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր

կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 11.04.2019թ.-ին կայացած հայտերի բացման նիստով, թիվ 2 արձանագրությամբ, «Ինկրիպտ» ՍՊԸ-ին գնահատող հանձնաժողովը ճանաչել է ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարը 11.04.2019թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

16.04.2019թ.-ին կոմիտեի կողմից տրամադրվել է հարցման մասին տեղեկատվություն, համաձայն որի՝ «Ինկրիպտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 11.04.2019թ.-ին, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Ինկրիպտ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը հրավերով սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացվել:

Հանձնաժողովը 2019 թվականի ապրիլի 17-ին թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Ինկրիպտ» ՍՊԸ-ի հայտը մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հանձնաժողովը, նույն արձանագրությամբ, Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, ուղարկել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

«Գլոբալ ԱՐ» ՍՊԸ-ն ի պատասխան «Ինկրիպտ» ՍՊԸ-ի հարցման, հայտնել են, որ 10.04.2019թ.-ից մինչև 18.04.2019թ. ընկած ժամանակահատվածում սերվերային համակարգերի տեղափոխման և տեխնիկական սպասարկման բարելավման նպատակով հոսթինգ ծառայության մատակարարումը կասեցված է եղել, որի հետևանքով անհնար է եղել մուտք գործել համակարգ, ինչպես նաև օգտվել էլեկտրոնային փոստի ծառայություններից:

«Գլոբալ ԱՐ» ՍՊ և «Ինկրիպտ» ՍՊ ընկերությունների միջև 01.04.2016թ.-ին կնքված վճարովի ծառայություն մատուցելու մասին պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է պատշաճ կերպով Պատվիրատուին տրամադրել հոսթինգային տիրույթ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.04.2019թ. թիվ 26/26-1/7038-2019 գրությամբ «Ինկրիպտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 2.4 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 4-ի:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ: Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը (ապրանքի տեխնիկական բնութագրերը), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ տվյալ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չներկայացնելով առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական

բնութագրերին համապատասխանության վերաբերյալ նկարագիրը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ՝ «Գլոբալ ԱՐ» ՍՊ ընկերության կողմից 08.05.2019թ. տրամադրած գրությունը, առ այն, որ 10.04.2019թ.-18.04.2019թ. ընկած ժամանակահատվածում սերվերային համակարգի տեղափոխման և տեխնիկական սպասարկման բարելավման նպատակով հոսթինգ ծառայության մատակարարումը կասեցված է եղել, որի հետևանքով անհնար է եղել մուտք գործել համակարգ, ինչպես նաև օգտվել էլեկտրոնային փոստի ծառայություններից, չի կարող հանդիսանալ վերաբերելի ու թույլատրելի ապացույց, քանի որ տրամադրված տեղեկանքը, որպես գրավոր ապացույց, չի պարունակում գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի մասին տեղեկություններ, այն վերացական է և նրանից պարզ չէ, թե որ հոսթինգ ծառայության մատակարարման մասին է, ինչ համակարգ մուտք գործելու անհնարինության մասին է և ինչ էլեկտրոնային փոստի ծառայություններից օգտվելու անհնարինության մասին է խոսքը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից ներկայացրած «Գլոբալ ԱՐ» ՍՊ և «Ինկրիպտ» ՍՊ ընկերությունների միջև 01.04.2016թ.-ին կնքված վճարովի ծառայություն մատուցելու մասին պայմանագրին (այսուհետ՝ Պայմանագիր), մասնավորապես՝ առարկային, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հստակ նշում առկա չէ, թե ինչ հոսթինգային տիրույթ է տրամադրվում: Այլ կերպ ասած, թե Պայմանագրի, և թե «Գլոբալ ԱՐ» ՍՊԸ կողմից տրամադրված տեղեկանքի ուսումնասիրության արդյունքում հնարավոր չէ փաստել, որ վերջիններս վերաբերում են incript.am կայքին և a.palikyan@incript.am էլ. փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ինկրիպտ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում ընդհանրապես չներկայացնելով ապրանքների ամբողջական նկարագիրը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.04.2019թ. թիվ 26/26-1/7038-2019 գրությամբ «Ինկրիպտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ինկրիպտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու (2) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ